

---

---

## ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱՐԵԿԱՑՈՒՆ ՎԵՐԱԳՐՎԱԾ ԾԱՌԻ ՄԱՍԻՆ

### Յ. Ղ. ՄԻՐՁՈՅԱՆ

Գաղտնիք չէ, որ միջնադարում այլևայլ պատճառներով Նարեկացուն վերագրվել են մի շարք գործեր<sup>1</sup>, որոնցից շատերի հեղինակային պատկանելության հարցը մինչև օրս վիճելի է: Այդօրինակ երկերից է նաև «Ճառ սրբոյն Գրիգորի Նարեկացոյ ասացեալ» ստեղծագործությունը, որը թե՛ բովանդակությամբ և թե՛ լեզվաճանկան մտածողությամբ այնքան հոգեհարազատ է Նարեկացու ստեղծագործություններին, որ, հավանաբար, հաշվի առնելով հենց այդ հանգամանքը, գրիչներից ոմանք և միակ տպագրությունն<sup>2</sup> իրականացնող հրատարակիչն այն վերագրել են Նարեկացուն:

Խնդրո առարկա ճառը մեզ է հասել երեք ձեռագիր օրինակով, որոնք պահպանվում են Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում, և, ինչպես ասվեց, մեկ տպագրությամբ:

Ձեռագրերից հնագույնում (ձեռ. թիվ 1324, ժամ.՝ 1281 թ., վայր՝ Հաղպատ) ճառն անանուն է, չունի վերնագիր և սկսվում է հետևյալ մտքով. «Ի բանն որ ասէ հաեաց<sup>3</sup> ի քեզ զգոյշ լեր անձին քում, գուցէ լինցի բան» (էջ 267ա - 276ա), որը փաստորեն վերցված է Հին Կտակարանի «Երկրորդ օրենք» գրքից (15:9): Ի դեպ, այս ձեռագրում անանուն ձևով առկա է նաև Նարեկացու «Համառատիւք բան խրատոյ» (այսուհետև՝ Խրատ) բարոյափիլիսոփայական մեծարժեք աշխատությունը (էջ 361ա - 377բ), որն ունի «Բան համառատ վասն ուղիղ հաւատոյ» վերնագիրը: Ընդ որում, Խրատը պարունակող առայժմ հայտնի տասնչորս ձեռագրերից սա հնագույնն է:

Ժամանակագրորեն երկրորդ ձեռագրում (ձեռ. թիվ 639, ժամ.՝ 1409, վայր՝ անհայտ) ճառն արդեն ընդօրինակված է Նարեկացու անունով՝

---

<sup>1</sup> Առանձին նարեկացիագետներ դրանց թիվը հասցնում են տասնհինգի (տե՛ս, օրինակ, **Պ. Խաչատրյան**, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, գիրք առաջին, Ս. Էջմիածին, 1996, էջ 119): Իմ կարծիքով, սակայն, այդ թիվը մասամբ ուռճացված է: Այդ մասին տե՛ս **Հ. Ղ. Միրզոյան**, Գրիգոր Նարեկացու գրական ժառանգության հարցի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», 2004, թիվ 1, նաև՝ **Հրաչյա Թամրազյան**, Գրիգոր Նարեկացին և նորալատոնականությունը, Եր., 2004, էջ 76-91:

<sup>2</sup> Տե՛ս «Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի Մատեան ողբերգութեան», Կ. Պոլիս, 1852, էջ 313-337: Ի դեպ, քանի որ ճառը հրատարակվել է Մատյանի հետ միասին, ուստի ունի ընդհանուր էջակալում: Այսուհետև այս հրատարակությունից հղումներ կատարելիս տողատակում նշելու եմ միայն՝ **Գրիգոր Նարեկացի**, ճառ, և էջը:

<sup>3</sup> Այս միտքը մեկնաբանել է նաև Բարսեղ Կեսարացին (տե՛ս **Սուրբ Բարսեղ Կեսարացի**, Նայիր քեզ, հին հունարենից թարգմանեց Սիմոն Գրքաշարեանը, «Գանձասար», հ. է, ՎԷՄ, Եր., 2002): Ճառագիրը քաջածանոթ է այդ մեկնությանը և ազատորեն օգտվել է դրանից:

«Սրբոյն Գրիգորի Նարեկացոյն. Հատեաց յանձն քո գուցէ մի լիցի բան ծառուկ ի սրտի քում անարեւն» (էջ 253ա - 274ա):

Վերջապէս, երրորդ ձեռագիրը (ձեռ. թիվ 5704, ժամ.՝ 1852 թ. հետո, վայր՝ հավանաբար Լիւն անապատ, էջ 1-32) նույնութեամբ ընդօրինակված է տպագրից և ըստ էութեան չունի բնագրային արժեք: Որ վերջինս տառացիորեն ընդօրինակված է տպագրից, երևում է այն բանից, որ նրանում կրկնված են տպագրական սխալները, վրիպակները և անգամ անհարկի պահպանված են տողադարձի ժամանակ ավելացված գաղտնավանկ ը-երը: Մանրամասների մեջ չմտնելու համար բերեմ ընդամենը մի քանի օրինակ. տպագրում գրված է «գիասարա(կա)կանն» (էջ 314), որտեղ փակագծերի մեջ առնված (կա)-ն ըստ երևույթին ավելացրել է տպագրիչը: Գրիչը, հավատարիմ մնալով տպագրին՝ վերարտադրել է նույնութեամբ (էջ 2): Տպագրում տողադարձված «գարբո-ցըն» (էջ 314), «ատեա-նըս» (էջ 314), «ան-դրը» (էջ 316), «այսին-քըն» (էջ 317), «զՅօբելեա-նըն» (էջ 318) բառերը թեև ձեռագրում չեն տողադարձված, սակայն պահպանված է գաղտնավանկ ը-ն՝ «գարբոցըն» (էջ 3), «ատեանըս» (էջ 3), «անդրը» (էջ 5), «այսինքըն» (էջ 6), «զՅօբելեանըն» (էջ 8):

Ճառի հեղինակային պատկանելության հարցին բանասերներն անդրադարձել են միայն վերջերս: Ընդ որում, նարեկացիագետ Պ. Խաչատրյանը, ելնելով ինչ-ինչ փաստերից, միանշանակ եզրակացրել է, որ այն «մեկ ուրիշ մատենագրի գործ է»<sup>4</sup>, իսկ Նարեկացու և Նարեկյան դպրոցի մատենագրական ժառանգության հմուտ հետազոտող Հ. Թամրազյանը, Ճառը համեմատելով ստուգապէս Նարեկացուն պատկանող երկերի հետ, անվերապահորեն այն վերագրում է Նարեկացուն<sup>5</sup>:

Նպատակ չունենալով հանգամանորեն զբաղվելու Ճառի հեղինակային պատկանելության հարցով՝ սույն հոդվածում ցանկանում եմ ներկայացնել «Մատենագիրք հայոց» մատենաշարի Նարեկյան դպրոցին նվիրված հատորի համար Ճառի քննական բնագիրը կազմելիս կատարած դիտարկումներս, որոնք, կարծում եմ, կարող են օգտակար լինել ինչպէս այդ հարցով, այնպէս էլ հայոց լեզվի պատմութեամբ զբաղվող մասնագետների համար:

**Պատմագիտական դիտարկումներ.** Պ. Խաչատրյանը, փորձելով որոշել Ճառի գրության ժամանակն ու վայրը, թեականորեն գրել է. «Եթե ենթադրելու իրավունք վերապահեինք մեզ, կանգ պիտի առնեինք 13-14-րդ դարերում հայկական Կիլիկիայում գործած որևէ կաթողիկոսի անվան վրա»<sup>6</sup>: Իմ խորին համոզմամբ, Ճառի հեղինակը չի կարող լինել 14-րդ դարի, անգամ իսկ 13-րդ դարի գործիչ, որովհետև, ինչպէս նշվեց վերը, հնագույն ձեռագիրը գալիս է 1281 թվականից և ընդօրինակված է էական կրճատումներով, մասամբ և աղավաղումներով: Այլ խոսքով ասած՝ գրիչն իր ձեռքի տակ ունեցել է նախորդ դարերից եկող և արդեն խաթարված ձեռագիր: Այդ է հաստատում թեկուզ այն փաստը, որ գրիչը, զգալով Ճառի ինչ-ինչ

<sup>4</sup> Պ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 136:

<sup>5</sup> Տե՛ս Հրաչյա Թամրազյան, Ճառ սրբոյն Գրիգորի Նարեկացոյ ասացեալ, Եր., 2009, 55 էջ:

<sup>6</sup> Պ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 136:

պակասություններ, ձեռագրի լուսանցքներում տեղ-տեղ դրել է կրճատման նշան (տե՛ս, օրինակ, էջք 268ա, 270ա-բ, 273ա ևն): Ասվածի օգտին է խոսում և այն իրողությունը, որ հնագույն ձեռագիրն օրինակված է ոչ թե Հայկական Կիլիկիայում, այլ Հաղպատում: Իսկ ինչպես գիտենք, 12-13-րդ դարերում Հաղպատի հոգևոր միաբանությունը կրոնադավանաբանական շատ հարցերում կտրականապես հակադրվում էր կիլիկյան հոգևոր հայրերին: Հետևաբար, հազիվ թե Հայկական Կիլիկիայում ստեղծված երկը հնագույն ձեռագրով մեզ հասներ հաղպատյան ընդօրինակությամբ: Անկարևոր չէ և այն պարագան, որ հնագույն ձեռագրում, ինչպես և 1409 թ. ընդօրինակված թիվ 639 ձեռագրում, բոլորովին չի գագսվում կիլիկյան շրջանի լեզվամտածողության ազդեցությունը: Օրինակ, ոչ մի անգամ չի հանդիպում օ տառի գործածություն, որը, ինչպես գիտենք, սկսել է շրջանառվել Կիլիկիայում: Իսկ թե ինչպիսին է եղել տպագրության համար հիմք ծառայած ձեռագիրը, ցավոք, ոչինչ ասել չենք կարող, որովհետև չնայած տպագրում գրված է օ և ոչ թե ա, սակայն անհնար է պարզել՝ արդյոք դա գալիս է ձեռագրի՞ց, թե՞ տպագրիչն է աւ-ը դարձրել օ՝ ելնելով ժամանակի լեզվական պահանջներից:

Ինչ վերաբերում է Ճառի հեղինակի կաթողիկոս լինելու հանգամանքին, ապա դա բոլորովին չի բխում Ճառի այն տեղիների բովանդակությունից, որոնց հիման վրա կատարվում է նման եզրակացություն: Բանն այն է, որ Ճառից բերելով այն հատվածը, որտեղ ճառասացը հայտնում է, որ ինքը ոչ միայն սնվել ու մեծացել է Արարչի տանը, այլև մեծարվել է որպես «քահանայ մեծ ի տան նորա», նարեկացիագետը եզրակացնում է, «որ հանձին հեղինակի մենք գործ ունենք կաթողիկոս հայրապետի և կամ եպիսկոպոսապետի հետ, որպիսին Նարեկացին չի եղել»<sup>7</sup>: Այնուհետև, վկայակոչելով համանման մեկ այլ միտք, գրում է. «Հեղինակը, ուրեմն, տսկական քահանա չէ (ինչպես Նարեկացին է իրեն կոչում), այլ բարձրաստիճան քահանա-եկեղեցական»<sup>8</sup>: Ինչպես տեսնում ենք, նարեկացիագետը Ճառի հեղինակին մեկ նույնացնում է «կաթողիկոս-հայրապետի և կամ եպիսկոպոսապետի հետ», իսկ մյուս անգամ նրան անվանում է «բարձրաստիճան քահանա-եկեղեցական»: Միանգամայն հասկանալի է, որ «բարձրաստիճան քահանա-եկեղեցական»-ը պարտադիր չէ, որ անպայման լինի «կաթողիկոս-հայրապետ և կամ եպիսկոպոսապետ», քանզի նա կարող է լինել նաև վանահայր, թեմի առաջնորդ, պատրիարք և կամ այլ բարձրաստիճան հոգևորական: Հետևաբար, բոլորովին համոզիչ չէ Ճառի հեղինակին «13-14-րդ դարերում հայկական Կիլիկիայում գործած որևէ կաթողիկոսի»<sup>9</sup> հետ նույնացնելու Պ. Խաչատրյանի փորձը:

**Քանասիրական դիպարկումներ.** պարզվում է, որ թեև Ճառն աչքի է ընկնում նորաստեղծ բառերի առատությամբ, բայց «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» կոթողային բառարանի հեղինակներն իրենց ձեռքի տակ չեն ունեցել Ճառը, այդ պատճառով նրանում առկա ավելի քան չորս տասնյակ նորաստեղծ բառերը կամ ընդհանրապես դուրս են մնացել բառարանից, կամ եթե տեղ են գտել, ապա ներկայացվել են այլոց անունով: Այդ բառերը

<sup>7</sup> Նույն տեղում:

<sup>8</sup> Նույն տեղում:

<sup>9</sup> Նույն տեղում:

բաժանվում են երկու խմբի՝ ա) միայն Նարեկացիով և հետագա դարերի մատենագիրներով վկայված բառեր, բ) վկայված միայն հետնարեկացիական աղբյուրներով: Հաշվի առնելով հարցի կարևորությունը, հարկ են համարում դրանք ներկայացնել առանձին-առանձին.

*Բառգրքում չներառված բառեր. ամենաշէն, ամրալերինք, անխառնապէս, անյիշուփին, առաջախնամութիւն, բարեբեղուն, բժախառն, եռանդաշարժ, երկրատեսասէրք, մարսական, մնասուն, ուշացնորեալք, սակաւակաց:* Ի դեպ, ուշագրավ է, որ Բառգրքում կան ուշացնորեալ-ին մոտ իմաստ ունեցող **ուշաբարձ** (վկայված միայն Կիրակոս Գ-անձակեցիով), **ուշաբարձեալ** (վկայված միայն Վարք հարանցով), **ուշագնաց լինել** (վկայված միայն Ոսկեփորիկով), **ուշաթափ** (վկայված միայն 15-րդ դարի մատենագիր Մխիթար Ապարանեցիով), **ուշաթափ լինիմ, ուշաթափիմ** (վկայված միայն Թովմա Արծրունիով և Տէր Իսրայելով, այսինքն՝ վերջինիս խմբագրած Հայսմավորքով), **ուշակորոյս** (վկայված միայն 13-րդ դարի ականավոր գործիչ Վարդան Արևելցիով) և **ուշամոռաց** (վկայված միայն Նարեկացիով): Բառգրքում կա **սակաւակեաց** բառը, որը գալիս է 5-րդ դարից, սակայն ոչ մի նշում չկա ճառում հանդիպող **սակաւակաց**-ի մասին, որը, կարծում են, նրբերանգային տարբերություն ունի **սակաւակեաց**-ի համեմատությամբ:

*Միայն Նարեկացիով և հետագա մատենագիրներով վկայված բառեր. ամենասփիռ, ամենասփիռ* (Նար. Ե, ՀԳ, Տօնակ), **աննմանական, աննմանակ** (Տօնակ, Նար. Գ և ԽՆ), **բարեբաշխ** (Երզն. լս., Նար. ԳԳ), **բարեբուլխ** (Վրդն ել, Նար. ԽՆ, Տօնակ), **գաղտնածիգ** (Նար. ԿԶ), **երկրպագութիւն** (Շար., Նար. ԼԵ և ն), **հոգեշունչ** (Նար. ԾԸ, ԿԶ և ԽՆ, Գր. Տղ. թղթ.), **ոսկիափայլ** (Նար. գնձ. եկեղ., Երզն. լս, Գնձ), **տիեզերագրաւ** (Նար. մծբ., Վրդն ծն): Այս ութ բառից **ոսկիափայլ**-ի համար նշված է՝ «տ. ոսկեփայլ», որը վկայված է միայն Նարեկացու Խաչի ներբողով: Դա նշանակում է, որ այս բառերը, այդ թվում և ոսկիափայլն ու ոսկեփայլը, գալիս են Նարեկացուց կամ Նարեկյան դպրոցից:

*Միայն հետնարեկացիական աղբյուրներով վկայված բառեր. աղէկիզիմ կամ աղէկիզիմ* (Սարգ. յկ. դ և ա. պ. է ժա), **ամենածնող** (Տօնակ), **անբաւականութիւն** (ՃՃ, Երզն. քեր.), **անխում** (Տօնակ), **անյիշաչարութիւն** (Սարգ. յկ. բ, Վրք հց. բ և ժէ), **աստուածարկու** (Տօնակ), **գունագեղեան** (Տօնակ), **երկնակազմ** (Տօնակ), **երկնածիգ** (Տօնակ), **լուսաշարժ** (Տօնակ), **լուսընկալ** (Վրդն ծն. և լս, Վանակ. յուրախացիրն, Տօնակ, Գնձ, Վրդն աւետար.), **կծկեցուցանեմ** (Տօնակ), **համահաւաք** (Վրդն սղ և ծն, Տօնակ), **հարսնագգեցեալ** (Վրդն երգ), **մարգարտայեռ** (Շ. յիշ. սղ), **մեկնողութիւն** (Վրդն քրգ), **շնորհապարտ** (Իզն, Սարգ բ պ. գ, Ճ.Գ, Սարգ ա պ. թ, Վրք հց ը), **տիգախոց** (Շար, Շ. տաղ, Հ. Կիլիկ), **քրիստոսածողով** (Ճ.Գ, Տօնակ):

Այս բառախումբը շատ կարևոր է մի քանի առումով. նախ՝ ճառի նորաստեղծ բառերից շատերն օգտագործվել են 11-13-րդ դարերի մատենագիրների կողմից, մինչդեռ մեզ հասած ձեռագրերից հնագույնն ընդօրինակվել է 1281 թ.: Այստեղից հետևում է, որ այդ դարերում ճառն ունեցել է բավականին լայն տարածում, որի վկայություն են նաև հնագույն ձեռագրում առկա վերոնշյալ կրճատումներն ու խաթարումները: Երկրորդ՝ ճառից օգտվել են նաև Տօնակի, Ճառընտիրների, Հարանց վարքի, Գանձարաններ-

րի և Շարակնոցի կազմողները: Իսկ հայտնի է, որ դրանք ամբողջությամբ կամ մասնակիորեն կյանքի են կոչվել հիմնականում Նարեկացուց հետո: Այս պարագայում հատկապես ուշագրավ է Տոնակը, որտեղ օգտագործված է այս բառախմբի կեսից ավելին: Իսկ եթե հաշվի առնենք, որ Տոնակում օգտագործված են նաև նախորդ խմբի բառերից երեքը, ապա կստացվի, որ ընդամենը քսանյոթ բառից տասնչորսը մտել է Տոնակ: Բայց բանը միայն քանակի մեջ չէ, այլ ավելի կարևոր է դրանց օգտագործման ձևը. Տոնակում օգտագործվել են ոչ միայն այդ բառերը, այլև ճառի այն հատվածներն ու մտքերը, որոնցում գործածված են տվյալ բառերը: Ասվածն ավելի հասկանալի դարձնելու համար հարկ են համարում զուգադրաբար բերել Բառգրքում միայն Տոնակով վկայված բառերը: Քանի որ հարցը չափազանց կարևոր է, իսկ նման բառառոտներն անհամեմատ համառոտ են, ուստի բերում են բառառոտներն ամբողջությամբ: Ինչ վերաբերում է ճառի համապատասխան հատվածներին, ապա հիմնականում դրանք բերվում են տպագրից, իսկ այստեղ դրանց բացակայելու կամ ձեռագրի համեմատությամբ էական տարբերություն ունենալու դեպքում՝ հնագույն ձեռագրից: Ավելորդ կրկնություններից խուսափելու համար նախապես հայտնեն, որ բոլոր ընդգծումներն իմն են:

### **Տոնակ**

**Անխում.** *ա. Ոչ սիրող զխում կամ զըմպելի արբեցուցիչ. հրաժարեալ ի գինոյ: Պահօք անկեր, անխում, պարկեշտ:*

**Աստուածարկու.** *ա. Վերարկեալ աստուծով. ւծազարդ. Առաջի աստուածարկու և քրիստոսաժողով հարանց: Դշխոյ խաչի պսակեալ, աստուածարկու փառօք փառավորելով:*

**Գունագեղեան.** *նոյն ընդ վ. Տիրագոյն պսակաւորն գունագեղեանն արեամբ անմահին նախավկայն Սյրեփանոս:*

**Երկնակազմ.** *ա. Կազմող զերկինս. երկնաստեղծ. Երկնակազմն և աշխարհաշէն չեռօքն բնեռեսցէ զամենեսեանն յերկեղն իւր և ի սէր:*

### **Ճառ**

*Որպէս Եսայի ասէ. յահ և երկիւղ քո յղացաք և ծնաք զոգիս մեր փրկել պահօք և աղօթիւք և անհանգիստ աշխատութեամբ, կրելով զահ և երկիւղն աստուծոյ, անկեր և անխում, պարկեշտ, հեզ և խոնարհ, սիրտ բեկեալ, հոգի մաշեալ, և խաչեալ աշխարհի, և միայն կենդանի աստուծոյ (էջ 326-327):*

*...պարզեց ինձ առաջի աստուածարկու և քրիստոսաժողով հարանց և հարազատից եղբարց (ձեռ. թիվ 1324, էջ 267բ):*

*...և անդրանիկն մարտիրոսաց երիցագոյն պսակաւորն գունագեղեալն արեամբ անմահին նախավկայն Սյրեփանոս (ձեռ. թիվ 1324, էջ 274 բ):*

*...և երկնակազմ և ամենաշէն չեռօքն բնեռեսցէ զամենեսեանն յերկիւղն իւր և ի սէրն (էջ 334):*

**Երկնաշիգ. Տ. Երկնատարած. Անարատ առագաստ, և Կեղի լայնագոյն և երկնաշիգ, խորագոյն և բարչրագոյն:**

**Լուսաշարժ. ա. Ի լուսոյ շարժեալ, կամ շարժիչ լուսոյ. լուսաբոլոխ, լուսածին. Յարարելոցն յիբմէ լուսաշարժ և ի բարեբոլոս սրեղծագործելոցն:**

**Կծկեցուցանեմ. նոյն ընդ վ. Մի՛ կծկեցուցանեք զսիրտ բո, և մի՛ դարչուցանեք զերեսս բո ի նմանէ:**

*... Կեղի լայնագոյն և երկնաշիգ, խորագոյն և բարչրագոյն ըստ անչափին աստուծոյ մեծացեալ և բարձրացեալ յանհասական բարձրութիւն (էջ 337):*

*... և անմեկնելի և անորիշ են յարարելոցն յիբմէ լուսաշարժ և բարեբոլոս սրեղծագործելոցն յառաջնոցն, մինչև ի հոսկ յետին յարարածս, որք բոլորովին անշունչք են և անշարժք (էջ 313):*

*... մի՛ կծկեցուցանեք զսիրտ բո, և մի՛ դարչուցանեք զերեսս բո ի նմանէ, այլ տալով տացես զինչ և խնդրիցէ (էջ 318):*

Կարծում եմ՝ ընդհանրություններն այնքան ակնհայտ են, որ կարիք չկա ծանրանալու դրանց վրա, ուստի ներկայացնեմ տարբերություններից առավել էականները: Այդ տեսակետից անչափ կարևոր է **գունագեղեան** բառը, որը պարունակող հատվածը չկա ո՛չ տպագրում և ո՛չ էլ թիվ 639 ձեռագրում. պահպանվել է միայն թիվ 1324 ձեռագրում (տե՛ս էջ 274բ): Ընդ որում, այստեղ այն ոչ թե **գունագեղեան** է, այլ **գունագեղեալ**: Փաստորեն Տոնակը կազմողն օգտվել է Ճառի այնպիսի օրինակից, որտեղ այդ բառն առկա է եղել աղավաղված ձևով: Իսկ քանի որ բառարանագիրները բառը Բառգիրք են ներմուծել միայն Տոնակի հիման վրա, այստեղից էլ այն Բառարանում տեղ է գտել սխալ ձևով: Հետաքրքիր է, որ Բառարանում առանձին բառհոդվածով տրված է **գունագեղեմ** բառը, բայց չկա **գունագեղեալ** ձևը, մինչդեռ այլ դեպքերում այդ ձևը տրվում է առանձին բառհոդվածով: Օրինակ, առանձին բառհոդվածով է տրված **գունակաւորեալ** բառը, որ վկայված է միայն Նարեկացիով: Ահա այդ բառհոդվածը. «Գունակաւորեալ. գունագեղեալ. գեղագարդեալ գունովք. իբրև գնկարս գեղեցիկս զարդուց գունակաւորեալ և պայծառացեալ. Նար. Յովէդ: Նոյն է և գունակեալ. ԾԾ» (հ. Ա, էջ 580): Ծիշտ է, բառարանագիրները բառս նույնացնում են **գունակեալ**-ի հետ, բայց վերջինս չի տրված առանձին բառհոդվածով: Ասենք նաև, որ Բառգրքում առանձին բառհոդվածով տրված է նաև **գունակութիւն** բառը, որը վկայված է միայն Գրիգոր և Անանիա Նարեկացիների համապատասխան օրինակներով:

Ինչպես դժվար չէ տեսնել, **գունագեղեան** բառի համար Տոնակից և Ճառից բերված հատվածների միջև կա նաև այն տարբերությունը, որ Ճառի «և անդրանիկն մարտիրոսաց երիցագոյն» բառերի փոխարեն Տոնակում գործածված է միայն **տիրագոյն** բառը, որը, կարծում եմ, նույնպես հետևանք է Տոնակի համար հիմք հանդիսացած Ճառի տվյալ հատվածի խաթարվածության:

Տարբերությունների տեսակետից ոչ պակաս արժեքավոր է նաև **երկնածիզ** բառը, որը Բառգրքում վկայված է միայն Տոնակից բերված օրինակով: Բառարանագիրները, իրավացիորեն զգալով բառագործածության անտրամաբանականությունը, սակայն չունենալով ստուգելու կամ ճշտելու հնարավորություն, բառարան են ներմուծել այնպես, ինչպես գրված է եղել Տոնակում, բայց փակագծերի մեջ ստիպված ավելացրել են՝ «(գուցե երկայնածիզ)» (հ. Ա, էջ 696): Ստուգումից պարզվեց, որ Ճառի՝ մեր ունեցած թե՛ 1281 թ. և թե՛ 1409 թ. ընդօրինակությամբ բառս **երկայնածիզ** է, մինչդեռ տպագրում **երկնածիզ** է, ինչպես Տոնակում: Այստեղից հետևում է, որ Տոնակի կազմողներն օգտվել են Ճառի աղավաղյալ տարբերակից, իսկ դա պատճառ է դարձել Բառգրքում սխալ բառաձևի հաստատագրման: Այլապես հազիվ թե հինգերորդ դարից եկող **երկայնածիզ** բառի համար գրված բավական ծավալուն բառհոդվածից բացի նրանում տեղ գտներ նաև **երկնածիզ** բառհոդվածը՝ վերը բերված ձևով: Որ Տոնակը կազմողն օգտվել է խնդրո առարկա Ճառի աղավաղված օրինակից, երևում է նաև այն բանից, որ Ճառի հեղինակը դեռևս 5-րդ դարից եկող **երկայնածիզ** և **երկայնութիւն** բառերը միանգամայն ճիշտ ձևով գործածել է գրեթե նույն բառակապակցության մեջ. **երկայնածիզի** գործածությունն արդեն տեսանք, իսկ **երկայնութիւն** բառը գործածված է «ըստ լայնութեան և երկայնութեան, ըստ խորութեան և բարձրութեան» (նույն տեղում, էջ 275բ) բառակապակցության մեջ:

Դիտելի է և այն պարագան, որ **երկնակազմ** բառի համար Տոնակից Բառգիրք ներմուծված հատվածը ձեռագրերում և տպագրում հանդիպում է էական տարբերությամբ. 1281 թ. ձեռագրում (թիվ 1324) գրված է՝ **երկնակազմ և աշխարհաշէն** (էջ 274բ), 1409 թ. ձեռագրում (թիվ 639)՝ **երկրակազմ և աշխարհաշէն** (էջ 272բ), իսկ տպագրում՝ **երկնակազմ և ամենաշէն**: Թե սկզբնապես Ճառում բառակապակցությունս ինչպե՞ս է եղել, առայժմ, քանի դեռ չունենք Ճառի մեկ այլ օրինակ, անշուշտ, անհնար է պատասխանել այս հարցին: Հարկ է ավելացնել, սակայն, որ **երկնակազմ**-ը Տոնակի միջոցով մտել է Բառգիրք և ներառվել հայոց լեզվի առանձին բառարաններում<sup>10</sup>, մինչդեռ **երկրակազմ**-ը չի մտել Հայկազյան լեզվի բառարան և չկա նաև հետագա հանրահայտ բառարաններում<sup>11</sup>: Նույն ձևով **աշխարհաշէն** բառը, որ 5-րդ դարից սկսած գործածել են Բուզանդը, Փարպեցին և ուրիշներ, վկայված է նաև Ճառից Տոնակ անցած վերոնշյալ հատվածով և շրջանառվում է նաև ներկայումս, մինչդեռ Բառգրքում և հետագա բառարաններում չկա **ամենաշէն** բառը: Ինչ վերաբերում է **անխում, աստուածարկու, լուսաշարժ և կծկեցուցանեմ** բառերին, ապա զուգադրաբար բերված հատվածներում ակնհայտ նույնությունների հետ միասին (տե՛ս **կծկեցուցանեմ** բառի համար զուգադրված հատվածները) կան նաև որոշ տարբերություններ, բայց այս պահին չեմ ցանկանում անդրադառնալ դրանց:

<sup>10</sup> Տե՛ս, օրինակ, **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան, հատոր առաջին, Եր., 1944, **Հ. Խ. Բարսեղյան**, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական տերմինաբանական բառարան, Եր., 1973:

<sup>11</sup> Տե՛ս, օրինակ, **Ստ. Մալխասեանց**, նշվ. բառարանը, հ. Ա, **Էդ. Աղայան**, նշվ. բառարանը, հ. 1 և «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. 1:

Հարկ է նշել նաև, որ նախորդ դարերից եկող մի շարք բառեր այլ աղբյուրներից բացի վկայված են նաև Տոնակից բերված օրինակներով, որոնք նույնպես վերցված են Ճառից: **Աշխարհաշէն** բառի մասին վերը արդեն խոսվեց, ուստի տե՛ս նաև **աստուածագութ, կռուարան, հնարիմացութիւն, ռխապահ** և այլ բառաբանումները:

Կարծում եմ՝ վերը ասվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Ճառի հեղինակը օժտված է եղել ոչ միայն բառաստեղծական բացառիկ կարողությամբ, այլև ընդհանրապես լեզվական այնպիսի նուրբ զգացողությամբ, որ կարողացել է վաղուց շրջանառվող բառերը գործածել նոր իմաստներով ու նրբերանգներով, որոնք էլ Տոնակի միջոցով փոխանցվել են Բառգիրք:

Ճառի գրության ժամանակն ու հեղինակային պատկանելության հարցը լուծելու համար, իմ կարծիքով, չափազանց կարևոր են Բառգրքում միայն Նարեկացիով և հետագա դարերի մատենագիրներով վկայված բառերը, որոնք առկա են նաև Ճառում: Հարկ չհամարելով մեկ առ մեկ անդրադառնալու դրանց բոլորին՝ փորձենք ներկայացնել միայն **բարերուլիս** և **գաղտնաձիգ** բառերի վերաբերյալ մեր դիտարկումները:

Նախ ասենք, որ Բառգրքում **բարերուլիս** կամ **բարերուլիս** բառը ներկայացված է միայն Վարդան Արևելցուց, Գրիգոր Նարեկացուց և Տոնակից բերված մեկական օրինակով: Ընդ որում, Տոնակի միտքը՝ «**Լուսաշարժ և բարերուլիս ստեղծագործելայք**», չնչին տարբերությամբ վերցված է Ճառից՝ «**Լուսաշարժ և բարերուլիս ստեղծագործելոցն** յառաջնոցն, մինչև ի հուսկ յետին յարարածս» (էջ 313): Ավելին, **լուսաշարժ** բառը, ի տարբերություն **բարերուլիս**-ի, Բառգրքում վկայված է միայն Տոնակի այս նույն օրինակով, բայց փոքր-ինչ ընդլայնված՝ «**Յարարելոցն յիւրմէ լուսաշարժ և ի բարերուլիս ստեղծագործելոցն**»: Հարկ կա՞ ասելու, որ օրինակս հենց Ճառից է, որտեղ **լուսաշարժ** և **բարերուլիս** բառերը, գործածված լինելով անմիջական հարևանությամբ, վկայում են Ճառը Նարեկյան դպրոցի մատենագրի պատկանելու մասին: Ի դեպ, հնագույն ձեռագրում **բարերուլիս**-ի փոխարեն գրված է «գեղեցիկ» (էջ 267ա), թիվ 639 ձեռագրում՝ «բարերուլիս» (էջ 253ա), իսկ տպագրում՝ «բարերուլիս»: Թե դրանցից ո՞րն է նախասկզբնականը, ցավոք, առայժմ դժվար է ճշտել: Մեկ բան, սակայն, ակնհայտ է. Ճառում բարի+կաղապարով կազմված բառերի առկայությունը հիմք է տալիս ենթադրելու, որ **գեղեցիկ** բառն ամենայն հավանականությամբ արդյունք է գրիչների միջամտության: Բանն այն է, որ Ճառում բացի հնից եկող **բարեգործ, բարութիւն, բարեխաւս** բառերից գործածված են նաև բառաբարդման վերը նշված կաղապարով կազմված **բարեբեղուն և բարեբաշխ** բառերը, որոնցից առաջինը չի ներմուծվել Բառգիրք, իսկ երկրորդը վկայված է միայն Գրիգոր Նարեկացու և 13-րդ դարի ականավոր բանաստեղծ ու մտածող Հովհաննես Երզնկացու մեկական օրինակով: Դա նշանակում է, որ բառն առաջին անգամ գործածել են հենց Նարեկյան դպրոցում, իսկ Հովհաննես Երզնկացին այն վերցրել է Նարեկացու Մատյանից կամ, գուցե, ինդրո առարկա Ճառից: Ուշագրավ է, որ Բառգրքում նույն կաղապարով կազմված երեսուն բառ վկայված է կա՛մ միայն Նարեկացիով (19 բառ), կա՛մ Նարեկացիով և հետագա դարերի աղբյուրներով (11 բառ): Նարեկացիական գործածություններից չորսը վերցված է Ապարանից խաչի ներբողից, չորսը՝ Առաքելոց ներբողից, երկուսը՝ Հակոբ Մծբնա հայրապետին նվիրված ներբողից, իսկ քսանը՝ Մատյանից:

Ավելի հետաքրքիր է գաղտնաձիգ բառի պարագան. Բառգրքում կարգում ենք. «**Գաղտնաձիգ**. Տ. Գաղտնաձիգ. Հարուածս նետից գաղտնաձիգ զինուց, Նար. ԿՁ»: Ինչպես տեսնում ենք, բառարանագիրները բառի ճիշտ ձևը համարել են **գաղտնաձիգ**-ը, որը Բառգրքում ներկայացված է հետևյալ հոդվածով. «Գաղտնաձիգ. ա. գաղտ ձգեալ. ծածուկ տեղաց նետած. ուստի ասի գաղտնաձիգ նետք. Յճխ. ԺԸ, Մանդ. Ձ, Արծր. Ե. 11, Յս որդի, Լնբ. սդ» (հ. Ա, էջ 525): Փաստորեն **գաղտ** արմատով կազմված **գաղտնաձիգ** բառը թե՛ Նարեկացուց առաջ և թե՛ նրանից հետո ունեցել է բավական լայն գործածություն, ուստի, թվում է, իրավունք ունեն ասելու, որ այն անպայման հայտնի է եղել նաև Նարեկացուն, բայց նա, ելնելով ինչ-ինչ նկատառումներից, գերադասել է **գաղտնաձիգ** տարբերակը: Քանի որ բառարանագիրներին անձանոթ է եղել ճառը, որտեղ նույնպես առկա է **գաղտնաձիգ** տարբերակը, ուստի վկայակոչել են միայն Նարեկացու այդ միակ օրինակով՝ համարելով այն ըստ էության շեղում ճիշտ ձևից: Մինչդեռ պարզվում է, որ Նարեկացին ճիշտ է համարել հենց **գաղտնաձիգ** ձևը: Այդ է հաստատում այն փաստը, որ Բառգրքում **գաղտ** արմատով կազմված երեսուն բառից Նարեկացին ոչ մեկը ոչ մի անգամ չի գործածել: Համենայնդեպս, այդ բառերի համար Նարեկացուց ոչ մի օրինակ չի բերված: Ընդհակառակը, նույն Բառգրքում **գաղտն** արմատով կազմված ընդամենը տասը բառից հինգը վկայված է միայն Նարեկացիով՝ **գաղտնածածուկ, գաղտնակուր, գաղտնաձիգ, գաղտնամարտ, գաղտնորոգայթ**, երկուսի համար ի թիվս այլոց վկայակոչված է նաև Նարեկացու համապատասխան միտքը՝ **գաղտնի և գաղտնութիւն**: Այսինքն՝ այդ արմատով կազմված տասը բառից միայն երեքն է դուրս մնացել Նարեկացու բառապաշարից: Հաշվի առնելով **գաղտնաձիգ** բառի առկայությունը ճառում, կարծում են, իրավունք ունեն եզրակացնելու, որ ճառը անպայման Նարեկյան դպրոցի երկ է:

Ի դեպ, ձեռագրերում բառս գրված է **գաղտնաձիգ**, իսկ տպագրում՝ **գաղտնաձիգ**: Հակված են մտածելու, որ սկզբնապես եղել է **գաղտնաձիգ**, իսկ գրիչներից ոմանք ընդօրինակելիս դարձրել են **գաղտնաձիգ**՝ կարծելով, թե **գաղտնաձիգ**-ը սխալ է: Բանն այն է, որ մինչև 20-րդ դարակես բառի ճիշտ ձև է համարվել **գաղտնաձիգ**-ը: Օրինակ, Ստ.Մալխասյանցի բառարանում կարդում ենք՝ «Գաղտնաձիգ, Տ. գաղտնաձիգ» (հ. I, էջ 408): Մինչդեռ դարի երկրորդ կեսում գործ ունենք տրամագծորեն հակառակ իրողության հետ. թե՛ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում» (հ. I, էջ 364) և թե՛ Էդ. Աղայանի «Արդի հայրենի բացատրական բառարանում» (հ. I, էջ 216) գրված է՝ «Գաղտնաձիգ, տե՛ս Գաղտնաձիգ»: Մեկ այլ ուշագրավ մանրամասն ևս. եթե Հայկազյան լեզվի բառարանում **գաղտ** և **գաղտն** արմատներով կազմված բառերի քանակը համապատասխանաբար՝ 30 և 10 էր, ապա մեր օրերում այդ հարաբերությունը գրեթե տրամագծորեն հակառակն է՝  $\approx 40 < 100$ :

Ճառը Նարեկյան դպրոցին պատկանելու իրողությունը հաստատող փաստերից բերենք ևս մի քանիսը: «Նարեկացու բառաշխարհը» հոդվածում գրել էի, որ Նարեկյան դպրոցի ներկայացուցիչները ջանում են նորաստեղծ բառերը հնարավորինս գործածել իրար հարևանությամբ<sup>12</sup>: Ճառում

<sup>12</sup> Այդ մասին տե՛ս **Հ. Ղ. Միրզոյան**, Գրիգոր Նարեկացու բառաստեղծական արվեստը, Եր., 2006, էջ 11:

իսկապես կիրառված է այդ սկզբունքը: Վերը արդեն խոսք եղավ հարևանությամբ գործածված **լուսաշարժ և բարեբուղխ** բառերի մասին: Ճառում հարևանությամբ գործածված են նաև «**աստուածարկու և քրիստոսածողով**» բառերը, որոնցից առաջինը Բառգրքում վկայված է միայն Տոնակով, իսկ երկրորդը՝ միայն «Ճ.Գ.»-ով: Քանի որ Տոնակը կազմողը, ինչպես ասվեց, օգտվել է Ճառից, ուստի բնական է ենթադրել, որ Ճառընտիրի կազմողը նույնպես օգտվել է Ճառից:

Նարեկյան դպրոցին պատկանելու կարևոր չափանիշ է նաև այն փաստը, որ դպրոցի ներկայացուցիչները փորձում են միևնույն նախադասության մեջ գործածել նորաստեղծ առավելագույնս շատ բառեր: Այդ տեսակետից, իհարկե, Գրիգոր Նարեկացին մնում է անգերազանցելի, քանզի Ապարանից խաչի ներբողում ընդամենը երկու ոչ ծավալուն նախադասության մեջ գործածել է ավելի քան քսան նորաստեղծ բառ<sup>13</sup>: Դպրոցին բնորոշ այդ սկզբունքը փայլուն դրսևորված է նաև Ճառում: Օրինակ, նրանում ասվում է, «որ է հաւատն **համահաւաք տիեզերագրաւ** համաշխարհական, **ամենասփիռ** և բոլորից բաւանդակող, որո հիմունք հաստահեղուք և պաղպաջմունք, ականակուռք և **մարգարտայեռք, ոսկիափայլք** և արծաթածոյք, որ են լերինք մշտնջենատրք և բլուրք յալիտենականք» (ձեռ. թիվ 1324, էջ 274բ): Բերված հատվածում ընդգծված բառերից երեքը՝ **ամենասփիռ**<sup>14</sup>, **ոսկիափայլք**<sup>15</sup> և **տիեզերագրաւ**, Բառգրքում վկայված են միայն Նարեկացիով և հետնարեկացիական աղբյուրներով, երկուսը՝ **համահաւաք** և **մարգարտայեռք**, միայն հետնարեկացիական աղբյուրներով: Թվում է՝ Նարեկացու երկերի հետ Ճառի ունեցած այսպիսի ընդհանրությունը բնավ պատահական չէ: Այդ է վկայում նաև Ճառից վերը բերված հատվածի բովանդակային և լեզվական բացահայտ մամուլությունը Նարեկացու Խրատի հետ: Ասվածն ավելի հասկանալի դարձնելու համար հարկ են համարում Ճառի այդ հատվածը զուգադրել Նարեկացու՝ նշված երկի համապատասխան մտքի հետ:

#### **Ճառ**

*... է հաւատն համահաւաք տիեզերագրաւ համաշխարհական, ամենասփիռ և բոլորից բաւանդակող, որո հիմունք հաստահեղուք, և պաղպաջմունք, ականակուռք և մարգարտայեռք, ոսկիափայլք և արծաթածոյք, որ են լերինք մշտնջենատրք և բլուրք յալիտենականք:*

(ձեռ. թիվ 1324, էջ 274բ)

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>14</sup> Տպագրում և թիվ 639 ձեռագրում **ամենասփիռ** է, իսկ թիվ 1324 ձեռագրում՝ **ամենասփիռ**: Քանի որ դրանք ըստ էության համարժեք են, այդ պատճառով բառարանագիրները տվել են երկուսը միասին՝ «ամենասփիռ, ամենասփիռ. ա. որ և ամենասփիռ»: Հետաքրքիր է, որ **ամենասփիռ** ձևը գալիս է 5-րդ դարից. վկայված է Ագաթանգեղոսի և Կորյունի համապատասխան օրինակներով, բայց Նարեկացին և Տոնակի կազմողը գործածել են **ամենասփիռ** ձևը: Իսկ ինչպես արդեն ասվել է, Տոնակի միտքը նույնությամբ վերցված է Ճառից:

<sup>15</sup> Չեռագրերում **ոսկիափայլ** է, իսկ տպագրում՝ **ոսկեփայլ**: Բառգրքում **ոսկեփայլ** բառը վկայված է միայն Նարեկացիով, իսկ **ոսկիափայլը**՝ Նարեկացիով, Երզնկացիով և Գանձարանով:

## Խրատ

...այսպես եւ Քրիստոս կամի զառաքինի ոգին ոչ միայն ի չարեաց ազատ լինել ըստ իւրաքանչիւր մասին եւ զգայութեան, զի այն է անարատութիւն անդամոցն, յորժամ մեղաց խառնուած ոչ ունիցի, բայց ոչ այսու շատանայ, այլ կամի իւրաքանչիւրոցն պէսպէս **ոսկիանման** եւ **մարգարտապիտ** և **ականահանգէտ** առաքինութեամբբ, ըստ իւրաքանչիւր բնատրականացն ներգործութեանց, զարդարել<sup>16</sup>:

Ճառից բերված հատվածում ընդգծված **տիեզերագրաւ, ամենասփիւռ և ոսկիափայլք** բառերի մասին խոսք եղավ վերևում: **Ականակոտ** բառը Բառգրքում վկայված է միայն Յովհան Օձնեցու և Տոնակի մեկական օրինակով, որոնցից երկրորդը՝ «պաղպաջունք ականակոտք և մարգարտայեռք», Տոնակի կազմողն անկասկած վերցրել է Ճառից: Այդ է հաստատում **արծաթաթաճույլ** բառի համար Տոնակից բերված օրինակը: Բառգրքում **արծաթաճույլ** բառը ներկայացված է երկու իմաստով, որոնցից առաջինը նշանակում է «որ հալէ և ձուլէ զարծաթ, արծաթագործ», իսկ երկրորդը՝ «Չուլեալ յարծաթոյ. արծաթի»: Իբրև այս իմաստն արտահայտող օրինակ՝ բացի «ՃՃ»-ից վկայված է նաև Տոնակի «Պաղպաջունք ոսկիափայլք և արծաթաճոյլք» հատվածը: Գժվար չէ տեսնել, որ **ականակոտ** և **արծաթաճույլ** բառերի համար Բառգրքում Տոնակից բերված օրինակները՝ «Պաղպաջունք ականակոտք և մարգարտայեռք» և «Պաղպաջունք ոսկիափայլք և արծաթաճոյլք», ըստ էության վերցված են հենց Ճառից, բայց մասամբ աղավաղված ձևով: Ճառում ասված է, որ հավատի հիմքերն են «հաստահեղուսք և պաղպաջունք, ականակոտք և մարգարտայեռք, ոսկիափայլք և արծաթաճոյլք» (ձեռ. 1324, էջ 274բ), մինչդեռ Տոնակից բերված օրինակներում «պաղպաջունք» բառը նախ կրկնված է և, երկրորդ, գործածված է ոչ նույն իմաստով:

Առավել հետաքրքրական են զուգարկված հատվածներում Ճառի «**ականակոտք և մարգարտայեռք, ոսկիափայլք և արծաթաճոյլք**» և Խրատի «**ոսկիանման և մարգարտապիտ և ականահանգէտ**» ընդգծված բառերի ընդհանրություններն ու տարբերությունները: Նախ ասենք, որ Խրատի այս երեք բառը Բառգրքում վկայված է միայն Նարեկացու այս օրինակով, այսինքն՝ դրանք ստեղծել և օգտագործել է միայն Նարեկացին: Երկրորդ, Բառգրքում միայն Նարեկացիով է վկայված նաև Ճառում հանդիպող **ոսկիափայլ** բառը: Իսկ դա նշանակում է, որ բառս Բառգիրք է ներմուծվել Նարեկացու միջոցով: Երրորդ, թե՛ Նարեկացին, թե՛ Ճառի հեղինակը հարևանությամբ գործածել են **ական, մարգարիտ և ոսկի** արմատներով կազմված բարդ բառեր, բայց եթե Նարեկացու երկուս գործածված բարդ բառերը Բառգիրք են մուծվել հենց Նարեկացու անունով, ապա Ճառում հանդիպող նորաստեղծ բառերն ու հնից եկող բառերի իմաստային նրբերանգները բառարանագիրները վկայակոչել են հետագա դարերի աղբյուրներով:

Ճառում և Նարեկացու երկերում հանդիպում են նաև բառագործածության բազմաթիվ այլ դեպքեր ևս, որոնք չեն կարող լինել զուտ պատահական զուգահեռություններ: Ավելորդ մանրամասների մեջ չմտնելու համար

<sup>16</sup> «Մատենագիրք հայոց, ԺԲ հատոր, Ժ դար, Գրիգոր Նարեկացի», Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 1083:

հարկ եմ համարում բերել միայն մեկ օրինակ. **աննիրի** կամ **աննիրիելի** բառ-  
հոդվածում Ներսես Շնորհալու և Կլիմաքոսի մեկական օրինակից բացի  
բերված է նաև Նարեկացուց չորս վկայություն: Այդ վեց օրինակներից մի-  
այն մեկում ենք հանդիպում **աննիրիելի** և **ակն** բառերի միասին գործածու-  
թյան: Եվ դրա հեղինակը Նարեկացին է: Շնորհալին, օրինակ, գործածել է  
«աննիրի աչօք» բառակապակցությունը: Մինչդեռ ճառում ունենք նարեկա-  
ցիական բառակապակցությունը, բայց ավելի ծավալուն՝ «բացեալ զաննիր-  
իելի և ողորմած ակն» (էջ 336):

Արդ, վերը շարադրվածից կարող ենք անել մի քանի կարևոր եզրակա-  
ցություն.

1. Պատահական չէ, որ ճառը վերագրվել է Նարեկացուն, այլ ըստ  
երևույթին հաշվի են առնվել Նարեկացու երկերի հետ նրա ունեցած բովան-  
դակային և լեզվամտածողական ակնհայտ ընդհանրությունները:

2. Ճառի հնագույն ձեռագիրը Հաղպատում 1281թ. ընդօրինակվել է  
ավելի վաղ շրջանից եկող և արդեն մասամբ աղավաղված օրինակից:

3. Դատելով Ճառից՝ Տոնակին, իսկ վերջինից Հայկազյան լեզվի բառ-  
գիրք անցած լեզվական նյութից, կարող ենք ասել, որ Տոնակը կազմողի օգ-  
տագործած ձեռագրում ճառն ունեցել է լեզվական սխալներ ու աղավա-  
ղումներ, որոնք մտել են Տոնակ, իսկ սրանից՝ Բառգիրք և գործածվել որպես  
ճիշտ ձևեր: Ընդհակառակը, մի շարք ճիշտ բառաձևեր դուրս են մնացել  
շրջանառությունից, որովհետև բառարանագիրներին անձանոթ է մնացել  
Ճառի բնօրինակը:

4. Գրիգոր Նարեկացու երկերի հետ Ճառի ունեցած գաղափարական-  
բովանդակային ու լեզվամտածողական բացահայտ ընդհանրությունները  
լիովին հիմք են տալիս պնդելու, որ Ճառն անառարկելիորեն Նարեկյան  
դպրոցի գրական արգասիք է:

5. Ձեռագրերում հանդիպող լեզվական սխալները, վրիպակներն ու  
անճշտությունները կարող են լուրջ կռվան դառնալ բանասիրական-աղբյու-  
րագիտական ինչ-ինչ հարցեր լուծելու համար:

**Г. К. МИРЗОЯН — Историко-филологические заметки о приписываемой Григору Нарекаци речи.** — В настоящей статье представлен ряд историко-филологических наблюдений, сложившихся у автора при подготовке им к изданию “Матенагирк Айоц” критического текста “Речи”, произнесенной святым Григором Нарекаци. Изложенные заметки могут быть полезны как для разрешения вопроса об авторской принадлежности “Речи”, так и при изучении истории армянского языка.